Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Լոռու մարզի Կուրթանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղացնելու համար

«ՀՀ Լոռու մարզի Կուրթանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՀՀ Լոռու մարզի Վարդաբլուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Լոռու մարզի Կուրթանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում **2021 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև ժամը15.00 -ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 15.00-ին,** «ՀՀ Լոռու մարզի Կուրթանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ Լոռու մարզ գյուղ Կուրթան , 5-րդ փողոց ,12 շենք:

Տեղեկությունների համար դիմել 094123270, vahenal@mail.ru: